

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» և «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	Կառավարություն	Նախագծերի փաթեթ	Նկատի ունենալով, որ Անվտանգության խորհրդի նիստի օրակարգի և քննարկվելիք փաստաթղթերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու իրավունքը բխում է Անվտանգության խորհրդի անդամի կարգավիճակից, առաջարկում ենք նախագծերի փաթեթից հանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին նման լիազորություն վերապահող կարգավորումները:	Առաջարկը չի ընդունվել, քանի որ Ազգային ժողովի նախագահը՝ Ազգային ժողովը ներկայացնելու և նրա բնականոն գործունեությունը ապահովելու իր սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացման նպատակով՝ պետք է	Չի ընդունվել:

				<p>իրավունք ունենա մասնակցելու Անվտանգության խորհրդի նիստերին, ինչպես նաև համապատասխան առաջարկություններ ներկայացնելու Անվտանգության խորհրդի նիստի օրակարգի և քննարկվելիք այն փաստաթղթերի վերաբերյալ, որոնք վերաբերվում են Ազգային ժողովի իրավասությանը վերապահված հարցերի լուծմանը (մանրամասները ներկայացված են օրենսդրական նախաձեռնության հիմնավորման մեջ):</p>	
<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ</p>					

2	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Նոր մաս	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով.</p> <p>«5. Խմբակցության ղեկավարն իրավունք ունի մասնակցելու Անվտանգության խորհրդի նիստերին, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնելու Անվտանգության խորհրդի նիստի օրակարգի և քննարկվելիք փաստաթղթերի վերաբերյալ.»:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել, քանի որ Անվտանգության խորհրդի նիստերին ԱԺ նախագահի մասնակցության անհրաժեշտությունը հիմնավորված է Ազգային ժողովը ներկայացնելու և նրա բնականոն գործունեությունը ապահովելու ԱԺ նախագահի սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացման նպատակով, իսկ ԱԺ խմբակցությունները նման սահմանադրական լիազորություն չունեն: Մեր կարծիքով, ԱԺ խմբակցություններն Անվտանգության խորհրդի</p>	Չի ընդունվել:
---	-----------------------------------	---------	---	--	---------------

				իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ԱԺ նախագահի միջոցով ներկայացնելու հնարավորություն ունեն, ինչպես ԱԺ խորհրդի ձևաչափով, այնպես էլ՝ քաղաքական խորհրդակցություններ ի և այլն միջոցներով:	
«Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ					
3	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	1-ին հոդված	<p>Հոդվածը խմբագրել հետևյալ կերպ.</p> <p>«Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» 2018 թվականի մարտի 7-ի ՀՕ-145-Ն օրենքի 4-րդ հոդվածում.</p> <p>1) 3-րդ մասում «կարող են մասնակցել նաև վարչապետի հրավիրած այլ անձինք» բառերը փոխարինել «մասնակցելու իրավունք ունի Ազգային ժողովի նախագահը, <i>Ազգային ժողովի խմբակցությունների ղեկավարները</i>, ինչպես նաև կարող են մասնակցել վարչապետի հրավիրած անձինք» բառերով,</p>	Առաջարկը չի ընդունվել (հիմնավորումը նույնն է, տես՝ վերևում):	Չի ընդունվել:

			<p>2) 10-րդ մասում «անդամներն» բառը փոխարինել «անդամները, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահին ու <i>խմբակցությունների ղեկավարներն</i>» բառերով,</p> <p>3) 11-րդ մասը «անդամներին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահին <i>և խմբակցությունների ղեկավարներին</i>» բառերով:</p>		
4	Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	1-ին հոդվածի 1-ին մաս	<p>Մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3.Անվտանգության խորհրդի նիստերին մասնակցելու իրավունք ունի Ազգային ժողովի նախագահը: Անվտանգության խորհրդի նիստերին կարող են մասնակցել նաև վարչապետի հրավիրած անձինք:»:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է: